Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24963
4-21

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հ. Ս. Խ. Հ. ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

300
1376-կա
331.881
4-21

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

331.881
4-21
Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Մոսկվա, Москва
ՊՈՍՏԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Պետհրատի I տպարան Վաղարշապատում
1924 թ.

27963
17 MAY 2013

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ.

1. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Արհեստակցական Միությունը լինելով համամիութենական և համաշխարհային պրոլետարիատի բանակներից մեկը, միացնում է Հ. Ս. Խ. Հ. ամբողջ լուսավորության աշխատավորներին։

2. Լուսաշխի Համահայաստանյան Միությունը Համամիութենական Արհեստակցական Միությունների (Լուսաշխի) Կենտրոնական Խորհրդի միջոցով մտնում է Կարմիր Պրոֆինտերնի մեջ, նպատակ դնելով զարկ տալ համաշխարհային մասշտաբով կապիտալիզմի դեմ ծավալվող հեղափոխական դասակարգային պայքարին և պրոլետարիատի դիկտատուրայի միջոցով իրականացնել կոմունիզմը։

3. Համամիութենական Լուսաշխի Միությունը ձգտում է ստեղծել լուսավորության աշխատավորների Միջազգային Միություն. այդ պատճառով էլ կապ և հաստատում ուրիշ յերկրների լուսավորության աշխատավորների միությունների հետ և մասնակցելով միջազգային կոնֆերանսներին և համագումարներին,

15 JAN 2010

ամեն տեղ պաշտպանում է իր հեղափոխական ու դասակարգային պայքարի պլատֆորման։

4. Լուսաշխի Համահայաստանյան Միությունը իր վերջնական նպատակը համարելով աշխատավորության ազատագրումը տնտեսական և մտավոր ստրկությունից—իր գործունեությունը տանում է համաձայն պրոլետարիատի ընդհանուր դասակարգային շահերի, պատրաստելով և դաստիարակելով իր անդամներին այնպես, վոր նրանք կարողանան լուծել իրենց առաջ կանգնած պատմական խնդիրները։

5. Սոցիալիստական շինարարության տվյալ շրջանում Լուսաշխի Համահայաստանյան Միության մերձավոր նպատակն է՝ ա) Միության անդամների տնտեսական և իրավական շահերի պաշտպանությունը և նրանց նյութական վիճակի բարձրացումը, բ) Միության անդամների կուլտուրական մակարդակի բարձրացումը, նրանց հասարակական-քաղաքական գիտակցության զարգացումը, գ) Կանոնավորել լուսավորության աշխատավորների աշխատանքի պայմանները և մասնակցել պետության համապատասխան մարմինների հիմնական, ծրագրային աշխատանքներին։

6. Հիշված խնդիրներն իրականացնելու համար Լուսաշխի Համահայաստանյան Միությունը

ա) Մշակում և կնքում և հավաքական պայմանագրեր համապետական ու տեղական նշանակությամբ համապատասխան մարմինների և հիմնարկների հետ և հետևում է պայմանագրերի կիրառմանը։

բ) Ղեկավարում և լուսավորության աշխատա-

վորների տնտեսական վիճակի բարելավման համար մղվող պայքարը. գործոն մասնակցություն է ունենում ծագած միջադեպերի լուծմանը և հաշտարար մարմինների աշխատանքներին։

գ) Կազմակերպում է Միության զանազան ֆոնդեր (փոխադարձ ոգնության, կուլտուրական և գործազուրկների)։

դ) Մասնակցում է լուսավորության աշխատավորների շահերի պաշտպանության և նրանց դրության բարելավման համար հրատարակվող որենքների մշակմանը։

ե) Հետևում է աշխատանքի պաշտպանության բոլոր որենքների կիրառմանը։

զ) Ձեռք է առնում միջոցներ լուսավորության աշխատավորների կյանքի ու աշխատանքի պայմանների բարելավման համար։

է) Կազմակերպում է սանատորիաներ և տնտեսական հաստատություններ իր անդամների պետքերի համար (սպառողական խանութներ, հանդստի տներ, սանատորիաներ, խորհրդ. տնտեսություններ և այլն)։

ը) Կազմակերպում է իր անդամների համար կուլտուրական և լուսավորության հիմնարկներ (ակումբներ, գրադարաններ, կուրսեր և այլն) և հրատարակում է պրոֆեսիոնալ ու ընդհանուր բնույթ կրող թերթեր։

թ) Հրավիրում է համագումարներ և կոնֆերանսներ գավառական և համահայաստանյան մասշտաբով լուսավորության աշխատավորների տնտեսական, իրավական և կուլտուրական շահերին վերաբերող հարցերի շուրջը։

ժ) Լուսավորության աշխատավորներին վերաբերող հարցերում մասնակցում է սոցիալական ապահովագրության, պետական մարմինների աշխատանքի ուժերի հաշվառման և բաշխման որգանների աշխատանքներին։

ժա) Լուսավորության հարցերում մասնակցում է պետության պլանային որգանների աշխատանքներին։

ժբ) Հսկում է իր անդամների պրոֆեսիոնալ հաստատուն դիսցիպլինային։

7. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միությունը համաձայն գոյություն ունեցող որենքների, ոգտվում է իրավաբանական անձի բոլոր իրավունքներով։

8. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միությունը ունի միաձև կնիք իր և իր բոլոր գավառական բաժինների համար։

II. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ.

9. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Արհեստակցական Միության անդամ կարող են լինել այն աշխատավորները, վորոնք աշխատում են լուսավորական, ուսումնական-կրթական, գիտական հիմնարկների և որգանների մեջ, նույնպես և Միության որգանների ու հիմնարկությունների բոլոր աշխատավորները, անկախ նրանց հասակից, ազգությունից և կրոնական ու քաղաքական համոզմունքներից։

10. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միության անդամ լինել չեն կարող՝

ա) Մասնավոր կրթական հաստատությունների տերերը։

բ) Մասնավոր կրթական հաստատություններում վարչական պաշտոն ունեցողները, որոնք աշխատավորներին վարձելու և արձակելու իրավունք ունին։

գ) Տնային ուսուցիչները, դաստիարակները և այն ուսուցիչները, որոնք պարապում են մանկավարժական գործով մասնավոր մարդկանց մոտ և գործ են ստանում անկախ աշխատանքի ուժերի հաշվառման և բաշխման որգանի։

դ) Աշխատունակությունը կորցրած մարդիկ։

ե) Այն անգործները, որոնք մինչև իրենց գործը կորցնելու րոպեն որևե միության անդամ չեն յեղել։

զ) Կրոնական պաշտամունքի ծառայողները։

է) Վոստիկանության, ժանդարմերիայի հատուկ մարմնի և պահնորդական բաժնի (охранка) նախկին պաշտոնյաները։

ը) Քրեական հանցանքով դատապարտվածները։

Ծանոթություն. § 10-ի գ, դ, ե, կետերի նկատմամբ բացառություն հնարավոր է Միության վարչության հատուկ որոշմամբ։

11. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միության մեջ անդամագրվելու համար պետք է ներկայացնել հայտարարություն հիմնարկության տեղական կոմիտեին կամ Միության վարչության և նվիրել մուտքի վճար (вступительный взнос). յեթե չկա որևե պատճառաբանված առարկություն, դիմողն ընդունվում է Միության մեջ։

12. Այն անձինք, որոնք անցնում են Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միության մեջ այլ միություններից, ընդունվում են հին անդամների իրավունքներով, առանց մուտքի վճար մուծելու։

Ծանոթություն. Այդ դեպքում ընդունվողը ներկայացնում է նախկին միության անդամատոմսը։

13. Լուսաշխի Համահայաստանյան Արհեստակցական Միության անդամները միաժամանակ չեն կարող լինել ուրիշ որևե արհեստակցական միության անդամ։

14. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միության այն անդամները, որոնք միության որգանների կողմից գործուղված են որևե հիմնարկության կամ կազմակերպության մեջ աշխատելու, մնում են Միության անդամներ։

15. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միության այն անդամները, որոնք գործուղվում են բարձրագույն կրթական հաստատություններ, որպես ունկնդիրներ և ուսանողներ, մնում են միության անդամներ, ուսանողության ժամանակամիջոցում։

16. Լուսավորության Աշխատավորների Համահայաստանյան Միության գործադուրկ անդամները,

յեթե արձանագրված են բանվորական ուժերի հաշվառման և բաշխման որգաններում, մնում են Միության անդամներ գործադրկության ընթացքում։

Ծանոթություն. Միության գործադուրկ, նույնպես և կրթական բարձր հաստատություններ ու բանվորական ֆակուլտետներ գործուղված անդամներն ազատվում են անդամակցական վճարներից, յեթե նրանց ստացած նպաստը կամ թոշակը՝ I-ին կատեգորիայի տարիֆային ցանցի սահմանած նվազագույնից պակաս է։

17. Անդամները Միությունից ժամանակավոր կամ անորոշ ժամանակով կարող են հեռացվել հետևյալ դեպքերում՝

ա) Այս կանոնադրության խախտելու։

բ) Միության որգանների վորոշումներին չենթարկվելու։

գ) Յերեք ամսվա ընթացքում ամսավճար չմուծելու։

դ) Յեթե՝ կան հանգամանքներ, վորոնք ըստ սույն կանոնադրության § 10-ի արդելք են հանդիսանում անդամի Միության մեջ մնալուն։

18) Մատնանշված պատճառներով Միությունից հեռացնելու վորոշումը հանվում է տեղական կոլեկտիվի ընդհանուր ժողովում, ներկաների $^2/_3$-ի մեծամասնությամբ, վորպիսի վորոշումը ուժի մեջ է մտնում Միության վարչության հաստատումից հետո։ Անդամը Միությունից կարող է հեռացվել նաև Միության վարչության վորոշմամբ։

19. Հեռացվածները կարող են բողոքել Միության համապատասխան բարձր մարմնին։

20. Միությունից անորոշ ժամանակով հեռացվածները յերեք ամսից հետո նոր դիմումով կարող են կրկին Միության մեջ ընդունվել Միության վարչության վորոշմամբ։

21. Համաձայն § 17-ի դ. կետի Միությունից հեռացվածները չեն կարող Միության մեջ ընդունվել յերեք ամսից շուտ։

22. Միությունից ինքնակամ հեռացածները, ինչպես և հեռացվածները վերստին Միության մեջ ընդունվելու դեպքում համարվում են վորպես նոր ընդունվածներ և վճարում են մուտքի վճար։

Ծանոթություն. Միությունից հեռացվածները և ինքնակամ հեռացածները չեն կարող յետ պահանջել անդամության ժամանակ վճարած իրենց անդամավճարները։

III. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

23. Յուրաքանչյուր անդամ Միության բոլոր ընդհանուր ժողովներում ոգտվում է վճռական ձայնի իրավունքով։

24. 18 տարին լրացրած անդամը Միության բոլոր որգաններում ընտրվելու իրավունք ունի։

Ծանոթություն. Հասակի նկատմամբ 24-րդ հոդվածում հիշվածից բացառություն կարող է արվել միայն Միության ղեկավար որգանի վորոշմամբ։

25. Ամեն անդամ պարտավոր է կատարելու այս կանոնադրությունը, յենթարկվելու Միության որդանների բոլոր վորոշումներին և ժամանակին գանձարկղ մուծելու սահմանված վճարներն ու հատկացումները։

26. Միության ամեն մի անդամ պարտավոր է ամենալավ կերպով տանելու այն հիմնարկության աշխատանքը, ուր նա պաշտոնավարում է։

IV. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՆՐԱ ՈՐԳԱՆՆԵՐԸ

27. Միության հիմնական բջիջը համարվում է այն աշխատավորների տեղական կոլլեկտիվը, վորոնք Միության անդամներ են։

28. Տեղական կոլլեկտիվի որդաններն են՝ կոլլեկտիվի ընդհանուր ժողովը և տեղական կոմիտեն։ Տեղկոմը ընտրվում է կոլլեկտիվի ընդհանուր ժողովում 6 ամիս ժամանակով և իր աշխատանքը տանում է ղեկավարվելով տեղկոմների մասին հրատարակված ընդհանուր Կանոնադրությամբ, վոր հրատարակում է Միության Կենտրոնական Կոմիտեն (և Միության կենտրոնական վարչության կողմից տեղական կոմիտեների վերաբերմամբ հրատարակված կանոններով)։

29. Գավառի բոլոր տեղական կոլլեկտիվները միանում են Միության գավառական կազմակերպության մեջ, վորը կոչվում է Միության գավառական բաժանմունք։

30. Գավառական բաժանմունքի որդաններն են՝ գավառական համագումարը և Միության գավառական

վարչությունը, վորը ընտրվում է տարին մեկ անգամ գումարվող գավառական համագումարի կողմից։ Աշխատանքների ընթացքում ղեկավարվում է Միության կենտրոնական վարչության կողմից գավառական բաժանմունքների վերաբերմամբ հայտարարված կանոններով։

31. Նահանգի բոլոր գավառային բաժինները միանում են նահանգի միութենական կազմակերպության մեջ, կոչվելով նահանգային բաժին։

32. Նահանգային բաժնի մարմինն է՝ նահանգային համագումարը, վորը հրավիրվում է տարեկան մեկ անգամ։ Վարչությունը իր աշխատանքները տանում է հատուկ կանոնադրությամբ, վորը մշակված է նահանգային վարչությունների համար, միության կենտրոնական կոմիտեի կողմից։

33. Համահայաստանյան մասշտաբով Միության որդաններն են, վոչ պակաս քան յերկու տարին մեկ անգամ գումարվող Միության համահայաստանյան հահամագումարը և նրա կողմից ընտրված կենտրոնական վարչությունը, վորը ղեկավարում է Միության ամբողջ աշխատանքները համագումարից համագումար։

34. Հիշյալ ժամանակներից դուրս արտակարգ համագումարներ հրավիրվում են հետևյալ դեպքերում.

1) Գավառական ա) տվյալ գավառի Միության տեղական կոլլեկտիվների անդամների վոչ պակաս քան $^1/_2$-ի պահանջով, բ) գավառական բաժանմունքի վերրստուգիչ հանձնաժողովի առաջարկությամբ, հաստատված Միության կենտրոնական վարչության կողմից և գ) վերջնիս վորոշմամբ։

2) Համահայաստանյան ա) գավառական բաժանմունքների պահանջով, յեթե միանում են տվյալ գավառի անդամների վոչ պակաս քան 1/2-ը, բ) համահայաստանյան կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի առաջարկությամբ, հաստատված համամիութենական կենտկոմի կողմից և գ) վերջնիս վորոշմամբ։

3) Համամիութենական ա) Միության կենտրոնական կոմիտեյի վորոշմամբ, հաստատված պրոֆեսիոնալ միությունների համամիութենական արհեստակցական միության խորհրդի կողմից (ВЦСПС), բ) նահանգական բաժինների պահանջմամբ, յեթե միանում են Ս. Խ. Հ. Միության լուսավորության աշխատավորների վոչ պակաս քան 1/2-ը, գ) կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովի առաջարկությամբ, հաստատված պրոֆեսիոնալ միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի կողմից և դ) վերջնիս վորոշմամբ։

35։ Համագումարների համար ընտրություններ լինելու յեն 1) գավառական միության տեղական կոլեկտիվների ընդհանուր ժողովներում, վերջնիս գավառական վարչության սահմանած նորմաներով։ 2) Համահայաստանյան միության հանրապետական համագումարներում վերջնիս (կենտրոնական հաթյան) սահմանած նորմաներով. 3) Համամիութենական կոմիտեյի սահմանած նորմաներով։

36. Համագումարներին քննության յենթակա յեն՝ ա) լսել և հաստատել գավառական վարչության հաշվետվությունը և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը, բ) քննել լուսավորության աշխատավորների պրոֆեսիոնալ կյանքի յենթակա խնդիրները, գ) գավլուսբաժնի (ժողովրդական կրթության գավառական բաժնի) զեկուցումը, դ) ընտրել գավառական վարչություն և վերստուգիչ հանձնաժողով, ե) ընտրել պատգամավորներ Միության համահայաստանյան համագումարին։

2) Համահայաստանյան ա) լսել և հաստատել նահանգական վարչության հաշվետվությունը և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը, բ) քննել լուսավորության աշխատողներին վերաբերող պրոֆեսիոնալ կյանքի հերթական խնդիրները, գ) լսել ժողովրդական կոմիսարիատի զեկուցումը, դ) ընտրել հանրապետական վարչություն և վերստուգիչ հանձնաժողով, ե) ընտրել պատգամավորներ Միության համառուսական համագումարներին։

3) Համառուսական ա) լսել և հաստատել կենտրոնական կոմիտեյի հաշվետվությունը և վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումը, բ) քննել լուսավորության աշխատավորների պրոֆեսիոնալ կյանքի հերթական խնդիրները, վորոնք կանգնած են Միության առաջ, գ) լսել ժողովրդական կոմիսարիատի զեկուցումը, դ) ընտրել կենտրոնական կոմիտե և վերստուգիչ հանձնաժողով։

37. Մինչև հերթական համագումարը, կարևորության դեպքում Միության մշտական որգանները (կենտրոնական վարչությունը, գավառական բաժինները) կարող են հրավիրել կոնֆերանսներ (համահայաստանյան և գավառային), վորոնք ունեն խորհրդակցական բնույթ և վորոնց վորոշումները ուժի մեջ են մը-

նում համապատասխան միության որդանի հաստատությունից հետո։

38. Տեղական որդանների հետ ավելի սերտ կապ ունենալու և Միության գործերը շրջանային և յերկրային մասշտաբով համակարգելու համար, կենտրոնական կոմիտեն կարող է կազմակերպել շրջանային և յերկրային բյուրոներ և ներկայացուցչություն։

39. Լուսաշխի վորոշ կատեգորիա կազմող աշխատավորների սպեցիֆիկ պայմանները, պահանջները հաշվի առնելով ու այդ պահանջները բավարարելու համար, Համահայաստանյան Լուսաշխի Արհեստակցական միությունը իր ներսում կազմակերպում է հատուկ սեկցիաներ, վորոնք հանդիսանում են Միության համար ոժանդակիչ կազմակերպություններ։

40. Վերստուգիչ հանձնաժողովների գործն է՝ կենտրոնական վարչության հատուկ կանոններով պարբերական վերստուգումներ կատարել Միության մշտական որգանների ադմինիստրատիվ, տնտեսական և ֆինանսական գործունեության ասպարիզում։

Y. ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

41. Միության միջոցները կազմում են՝

ա) Միության անդամների մուտքի վճարները.

բ) Միության անդամների ամբողջ աշխատավարձի 2%-ը։

գ) Միության ամեն տեսակի ձեռնարկներից և միջոցներից կազմված մուտքերը։

դ) Միության համամիութենական համագումարի վորոշմամբ կատարված հատուկ գանձումները։

42. Մուտքի և ամսական վճարները, այլ և նախորդ դ. կետով նախատեսված հատուկ վճարումները տեղական կոմիտեները վորոշված կարգով մուծում են Միության գավառական վարչության դրամարկղը։

43. Միության գավառական վարչությունը նախորդ հոդվածի համաձայն ստացած դրամական միջոցները մուծում է Միության Համահայաստանյան վարչության դրամարկղը։

44. Միության Համահայաստանյան վարչությունը գավառներից իր ստացած դրամական միջոցների 10%-ը հանձնում է պրոֆեսիոնալ միության նահանգական խորհրդին, 5%-ից մինչև 25%-ը ուղարկում է Միության կենտրոնական կոմիտեին, իսկ մնացյալը թողնում իր տրամադրության տակ։

Մանրություն. Կենտրոնական վարչության գավբաժինների կողմից տրվելիք ճիշտ տոկոսը վորոշում է Միության կենտրոնական վարչությունը։

45. Միության կենտրոնական կոմիտեն նահանգներից ստացած 10% մուծումները հանձնում է համամիութենական կենտրոնական Արհմիությունների խորհրդին, իսկ մնացորդները կազմում են կենտրոնական կոմիտեի միջոցները։

46. Տեղական կոմիտեները և Միության գավառային վարչությունները իրենց աշխատանքները կատարում են նախահաշիվներով բաց թողնված գումարներով։

47. Միության կենտրոնական վարչությունը իր աշխատանքները տանում է վորոշված նախահաշվով,

վորը հաստատված պետք է լինի արհմիության կենտրոնական կոմիտեյի կողմից։

Սույն կանոնադրությունը հաստատված է լուսավորության Աշխատավորների Պրոֆեսիոնալ Միության համահայաստանյան 2-րդ համագումարում։

Լուսաբեր արհմիության

կենտրոնական վարչության ՆԱԽԱԳԱՀ՝

Պատասխանատու ԲԱՐՏՈՒՂԱՐ՝

1 ոգոստոսի 1924 թ.

Ցերևան

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI. 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

«Ազգային գրադարան»
NL0196895